

<b>Տիպը</b>	Քաղաքականություն	<b>Խմբագրությունը</b>	Երրորդ
<b>Ընդունող մարմինը</b>	Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողով	<b>Կարգավիճակը</b>	Գործում է
<b>Հաստատող ներքին իրավական ակտի տեսակը և համարը</b>	Թիվ 1 արձանագրություն	<b>Ընդունման վայրը</b>	ք. Ժնև
<b>Կիրառման շրջանակը</b>	Թիվ 3 որոշում	<b>Ընդունման ամսաթիվը</b>	30.04.2013թ.
	Բանկի բաժնետերեր, Բանկի կառավարման մարմիններ, Հաշվապահական հաշվառման դեպարտամենտ, Հաճախորդների սպասարկման վարչություն	<b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b>	30.04.2013թ.
		<b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b>	

**«ԱՐՅԱԽԲԱՆԿ» ՓԲԸ ՇԱՀԱԲԱԺՆԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**«Արցախբանկ» ՓԲԸ  
Բաժնետերերի ընդհանուր  
ժողովի նախագահ՝**

**Հ. Կապրիեյան**

## **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. «Արցախբանկ» ՓԲԸ Շահաբաժնային քաղաքականությամբ (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանվում են «Արցախբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին շահաբաժինների վճարման սկզբունքները, պայմաններն ու կարգը:

1.2. Բանկի կողմից շահաբաժինների վճարման գործընթացը կարգավորվում է ՀՀ, ԼՂՀ գործող օրենքներով և այլ իրավական ակտերով, Բանկի կանոնադրությամբ և սույն Քաղաքականությամբ:

1.3. Շահաբաժնային քաղաքականության հիմքում դրված է Բանկի կայուն զարգացման հնարավորության և Բանկի բաժնետերերի շահերի համադրման սկզբունքը:

## **2. ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՎՈՂ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

2.1. Բանկի բաժնետերերին շահաբաժիններ վճարվում են.

2.1.1 Տարեկան կտրվածքով,

2.1.2 Բանկի տարեկան արդյունքներով ստացված զուտ շահույթից՝ Բանկի կանոնադրությամբ նախատեսված հիմնադրամները համալրելուց հետո՝ Բանկի կանոնադրական հիմնադրամում բաժնետերերի ունեցած բաժնեմասին համապատասխան,

2.1.3 Սույն Քաղաքականության 4-րդ գլխում նախատեսված սահմանափակումների բացակայության դեպքում,

2.1.4 Բանկի Խորհրդի՝ շահաբաժիններ վճարելու վերաբերյալ առաջարկության հիման վրա,

2.1.5 Շահաբաժիններ վճարելու վերաբերյալ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ժողով) որոշման առկայության դեպքում:

2.2. Տարեկան արդյունքներով մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահաբաժնի չափը որոշվում է որպես հասարակ բաժնետոմսերի գծով վճարվող շահաբաժինների ընդհանուր գումարի և շահաբաժիններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմելու օրվա դրությամբ Բանկի կողմից տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի քանակի հարաբերություն:

Բաժնետիրոջը վճարվող շահաբաժինների ընդհանուր գումարը հաշվարկվում է մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահաբաժնի չափը բաժնետիրոջը պատկանող հասարակ բաժնետոմսերի քանակով բազմապատկելու միջոցով:

### **3. ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1. Տարվա ֆինանսական գործունեության արդյունքներից ելնելով Բանկի Խորհուրդը որոշում է ընդունում դիմել ժողովին՝ տարեկան շահաբաժիններ վճարելու կամ չվճարելու առաջարկությամբ: Խորհրդի կողմից շահաբաժիններ վճարելու առաջարկությամբ Բաժնետերերի ընդհանուր ժողովին դիմելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում ժողովին են ներկայացվում նաև վճարվելիք շահաբաժինների չափը, վճարման ձևը և ժամկետները:

3.2. Բանկի Խորհրդի կողմից կազմվում է նաև շահաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, որում ներառվում են ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ Բանկի բաժնետերերի ռեեստրում ընդգրկված բաժնետերերը:

3.3. Բանկի Խորհրդի առաջարկության հիման վրա ժողովը որոշում է կայացնում.

3.3.1. Բանկի բաժնետերերին տարեկան շահաբաժիններ վճարելու վերաբերյալ՝ սահմանելով վճարվելիք շահաբաժինների չափը, վճարման ձևն ու ժամկետները,

3.3.2. Բանկի բաժնետերերին տարեկան շահաբաժիններ չվճարելու վերաբերյալ:

Ընդհանուր ժողովի՝ շահաբաժիններ վճարելու մասին որոշմամբ շահաբաժինները կարող են կուտակվել և վճարվել մեկ այլ տարվա ընթացքում:

### **4. ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

4.1 Բանկն իրավունք չունի շահաբաժիններ վճարելու մասին որոշում կայացնել, եթե

4.1.1 Բանկը բաժնետիրոջից հետ չի գնել բաժնետոմսերը կամ դրանց մի մասը, երբ

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել,

- Բանկի կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են բաժնետիրոջ իրավունքները և բաժնետերը դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

4.1.2 Շահաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահաբաժինների վճարման հետևանքով.

4.1.3 Այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:

## **5. ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ**

5.1 Բանկի բաժնետերերին տարեկան շահաբաժիններ վճարելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում շահաբաժինների գումարները որոշման մեջ նշված կարգով և ժամկետում փոխանցվում են բաժնետերերի անունով Բանկում բացված բանկային հաշիվներին:

5.2 Բանկի բաժնետերերին շահաբաժինները վճարվում են ՀՀ դրամով:

Բանկի բաժնետերը բանկային հաշվին մուտքագրված շահաբաժնի գումարը կարող է տնօրինել կանխիկ կամ անկանխիկ:

5.3 Շահաբաժիններ վճարելիս ոչ մի բաժնետեր վճարման ժամկետների առումով առավելություն չունի:

## **6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

6.1. Սույն Քաղաքականությունը հաստատվում է Բանկի Ժողովի կողմից:

6.2. Սույն Քաղաքականությունում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Բանկի Ժողովի որոշմամբ: